**Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի**
**12-րդ դասարան**

**Տևողությունը՝ 180 րոպե**

Մի օր սատանան որոշեց ***ցուցադրել*** իր զենքերը՝ շարելով դրանց ապակե ցուցափեղկում, և բոլորի վրա ամրացնելով պիտակներ՝ նշեց որի գինը որքան արժի: Հավաքածուն ներառում էր մարդու բնորոշ բոլոր հոռի գծերը, (զորօրինակ՝ չարություն, ընչաքաղցություն, բոջախոհություն) ինչը մտորելու առիթ տվեց ոմանց: Նրանցից շատերն այդ պահին վերհիշեցին իրենց՝ անցյալում գործած արարքները:

Վերջում ցուցափեղկի՝ ոչնչով աչքի չընկնող անշուք ***բարձին***, ամրացված էր մի վահանակ՝ հուսահատություն վերտառությամբ. այն, հակառակ ***մյուսների***, շատ բարձր գին ուներ:

***Հարցին***, ինչու այն այդքան թանկ արժի, սատանան պատասխանեց.

- Հուսահատությունն իմ հզորագույն զենքն է՝ իմ զենքերի զենքը. երբ չկարողանամ իրագործել մտադրությունս, նա ինձ օգնության կհասնի: Մարդն իսկույն իմ ձեռքի խաղալիքը ***կդառնա***, եթե մի փոքր հուսահատություն կաթացնեմ նրա ուղեղում:

Սատանայի խոսքերից բոլորը կարկամեցին: Սրահում տիրող ճնշող լռությունը, սակայն, ընդհատվեց ներկաներից ***մեկի***՝ լուսավոր հայացքով մի երիտասարդի՝ խրոխտ ու վճռական ***ձայնով***.

- Մոլորակի սիրելի՛ բնակիչներ, խնդրում եմ, մի՛ թույլ տվեք՝ հուսալքությունը հաղթի ձեզ, որովհետև չարության որոմը բույն կդնի ձեր հոգիներում, ու սատանային էլ կհաջողվի ապականելու մեր բարի ու գեղեցիկ աշխարհը:

1. Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով թույլ տրված կետադրական սխալները, և անհրաժեշտ տեղերում լրացրո՛ւ բաց թողնված տրոհության նշանները:
2. Բնագրից դո՛ւրս գրիր լեզվական սխալներով գործածված բառերն ու բառաձևերը՝ դիմացը գրելով ճիշտ տարբերակը:
3. Դո՛ւրս գրիր տեքստում գործածված հարաբերական և հարցական բոլոր դերանունները՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով շարահյուսական պաշտոնը:
4. Շարահյուսորեն վերլուծի՛ր տեքստում ընդգծված անդամները:
5. Գրի՛ր տրված բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ. *ազոխ, ստամբակ, սնդուս, անթրոց, որոմ*:
6. Պարզ նախադասություններով ներկայացրո՛ւ անորոշ դերբայի չորս կիրառություն (ստորոգելի, որոշիչ, հանգման խնդիր, պատճառի պարագա)՝ յուրաքանչյուրի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը:
7. Մեկնաբանի՛ր տրված դարձվածքները. *թագավորը մերկ է, Դիոգինեսի տակառ, լեռը մուկ ծնեց, Կայենի խարան:*
8. Տրված բառաշարքից առանձնացրու բարդածանցավոր բառերը՝ ընդգծելով արմատը՝ մեկ, ածանցը երկու գծով. *առտնին, հեծելախումբ, ստորգետնյա, խոտհարք, անենթակա, կույրաղի, հնամենի, վարագույր, տրամադրություն, բազմահատոր*:
9. Գրի՛ր շարադրություն՝ «Գրավի՛ր բարձունքը» վերնագրով (առնվազն երկու էջի սահմաններում: